## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՋԱՆՖԻԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք,
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ջանֆիդա, 1 փող. 48/1, Հեռ.
(093) 848408 , janfida.armavir@mta.gov.am

N 114
*04 սեպտեմբեր 2017թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոս ամսվա ընդունված որոշումները և արձակված կարգադրությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

*Կատ. Գործավար՝ Է. Ազիզյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի օգոստոսի 17 թիվ 05

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱՐԵՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ , 159-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Վարդուհի Բարեյանի 2017 թվականի օգոստոսի 17-ի դիմումը .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1 .2017 թվականի օգոստոսի 21-ից Ջանֆիդա համայնքի <Ջահֆիդա ԱԿ> ՓԲԸ-ի տնօրեն Վարդուհի Բարեյանին տրամադրել 2017 թվականի ամենամյա արձակուրդ 22 աշխատանքային օր տևողությամբ:
2 . Աշխատանքի մեջ համարել 2017 թվականի սեպտեմբերի 19-ից:
3 . Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան
2017 թվականի օգոստոսի 17
գ. Ջանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի 01 օգոստոսի թիվ 39 որոշում

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի` ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 07-ի «Համայնքային նշանակության փողոցների հասցեավորման մասին» թիվ 6 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի բնակիչ Անահիտ Խաչիկի Հակոբյանին պատկանող տնամերձ հողամասին / ծածկագիր 04-083-0016-0023 / տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի 15 փողոցի 26/1 տնամերձ հողամասի:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի մարզերի միավորման ստորաբաժանում` պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար` Կ. Ղորղանյան

2017 թվականի օգոստոսի 01

գ. Ջանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի օգոստոսի 01 թիվ 40

## ԱՆԱՀԻՏ ԽԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, և 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի թիվ 753-Ն որոշումը և հաշվի առնելով Անահիտ Հակոբյանի կողմից 0.12 հա. օրինական տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 0.0041 հա. հողամասը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղի բնակիչ՝ Անահիտ Հակոբյանի /ծնված 1948 թ. / տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 41 քմ. հողամասը անհատույց հատկացնել սեփականության իրավունքով:
2. Ներկայացնել Հ.ՀԿԱԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Անահիտ Հակոբյանի սեփականության իրավունքը, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04402155

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջանֆիդա, (093) 848408, janfida.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 41

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 777-781-րդ հոդվածներով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով.համայնքի համայնքապետարանի և մշակույթի տան պարտեզի մշակություն

1 . 2017 թվականի օգոստոսի 01-ից Արթուր Ռուբիկի Սուքիասյանի հետ կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր մեկ տարի ժամկետով` համաձայն հավելվածի:

2 . Պայմանագրի գինը սահմանել 300 000 /երեք հարյուր հազ./ ՀՀ դրամ:

3 Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

20 17 թ. Օգոստոսի 01
գ.Ջանֆիդա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջանֆիդա, (093) 848408, janfida.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 42

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 777-781-րդ հոդվածներով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով. համայնքի Սուրբ Կարապետ եկեղեցին պահպանման նպատակով

1 . 2017 թվականի օգոստոսի 01-ից Ալվինա Զարզանդի Բոթոյանի հետ կնքել ծառայրությունների վճարովի մատուցման պայմանագիր մեկ տարի ժամկետով` համաձայն հավելվածի

2 . Պայմանագրի գինը սահմանել 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3 Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

20 17 թ. Օգոստոսի 01
գ.Ջանֆիդա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջանֆիդա, (093) 848408, janfida.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 43

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի <Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 07-ի <Համայնքային նշանակության փողոցների հասցեավորման մասին> թիվ 6 որոշումը.

1 . Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի բնակիչ՝ Արմենակ Մանուկի Հովհաննիսյանի տնամերձ հողամասին /ծածկագիր 04-083- 0073-0007 / տալ հասցե Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի 56 փողոց 17 տնամերձ հողամաս;

2 . Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

20 17 թ. Օգոստոսի 23
գ.Ջանֆիդա